*ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ*

*Պ-1131²-01.08.2025-ՏՏԳԾ-011/0*

Տեղեկանք փոփոխվող հոդվածների վերաբերյալ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** 2021 թվականի մայիսի 5-ի Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 307-րդ հոդվածի 1-ին մասում «այնպիսի՝ բառը փոխարինել ‘օրենքով չնախատեսված դեպքում և կարգով’, իսկ «որը տառապանք պատճառելով է հանգեցնում մահվան,» բառերը հանել:

~~ը շարադրել նոր խմբագրությամբ՝~~

~~«1. Կենդանու նկատմամբ դաժան վերաբերմունքը՝ ցանկացած գործողություն, որը հանգեցնում է կենդանու մահվան, բացառությամբ կենդանու կողմից մարդու կյանքին սպառնացող վտանգի պարագայում ինքնապաշտպանության դեպքերի, կենդանու կյանքի ընդհատումը խեղդելու, կախելու, մասնատման, ուժեղ հարվածի, մտրակման, հրազենով կրակելու, դիտավորությամբ վրաերթի միջոցով, կենդանու կյանքի ընդհատումը թունավորման կամ այնպիսի նյութի ներարկման միջոցով, որը հանգեցնում է դաժան եւ ցավոտ մահվան, «Կենդանիների նկատմամբ պետապահանատու վերաբերմունքի մասին» օրենքի դրույթները խախտելով՝ կենդանու քնեցումը, կենդանի վիճակում կենդանու մաշկահանումը, մորթազերծումը, հերձումը կամ անդամահատումը, կենդանի վիճակում կենդանուն կրակի վրա նետելը, բարձրությունից կամ ընթացքի մեջ գտնվող փոխադրամիջոցներից նետելը, բոլոր տեսակի կենդանիների մարտերի կազմակերպումը եւ իրականացումը, թափառող կենդանիների այնպիսի բռնումը, որը հանգեցնում է կենդանու խեղմանը կամ կենդանու կյանքի ընդհատմանը, կենդանու նկատմամբ դաժան վերաբերմունքը՝ առանց մահվան ելքի, կենդանուն սահմանված կարգի խախտմամբ գիտահետազոտական, բժշկական կամ փորձարարական նպատակով օգտագործելը.~~

~~պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տեւողությամբ, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:»։~~

***Հոդված 2.*** Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: